ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«3» ապրիլի 2023 թվականի N: 93 -Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի և 19-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 7 հավելվածի 19-րդ կետի 18-րդ ենթակետի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի
2023 թվականի ապրիլի 3 -ի N:93-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի (այսուհետ՝ Մարզպետ) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Աշխատակազմի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, Աշխատակազմի կանոնադրությամբ, Մարզպետի որոշումներով, սույն կանոնադրությամբ, Աշխատակազմի գլխավոր քարտուղարի հրամաններով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:
3. Վարչությունը վերակազմակերպում և նրա գործունեությունը դադարեցնում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:
4. Վարչության կանոնադրությունը հաստատում (փոփոխում) է Մարզպետը:

2.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Վարչության հիմնական խնդիրներն ու նպատակներն են՝

1) առողջապահության և սոցիալական ոլորտներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Մարզպետին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը,
2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում (այսուհետ՝ Մարզ) ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության իրականացման ապահովումը,

3) Մարզի ընտանիքի, կանանց և երեխաների խնդիրների վերհանումը, դրանց լուծման նպատակով լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացումը, պետական նպատակային ծրագրերի կատարման ապահովումը,
4) Մարզում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների պաշտպանության ապահովումը, նման իրավիճակում նրանց հայտնվելը կանխարգելելը,
5) ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու երեխայի իրավունքի ապահովմանն աջակցելը, սոցիալական պաշտպանությանն ուղղված ծրագրերի կատարման ապահովումը,
6) Մարզում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, բարձր ռիսկայնության ընտանիքների երեխաների բացահայտումը, ուղղորդումը, իրավունքների պաշտպանությունը, այդ թվում այլընտրանքային խնամքի կազմակերպումը,
7) Մարզում գենդերային քաղաքականության կատարման ապահովումը:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Վարչությունն, իր հիմնական խնդիրների ու գործառույթների շրջանակներում՝
1) ապահովում է պետական առողջապահական ծրագրերի իրականացման գործընթացի կազմակերպումը.
2) ապահովում է մարզային ենթակայության բժշկական հաստատությունների պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման պետական պատվերի տեղադրման հայտերի ներկայացումը պետական լիազոր մարմնին.
3) ապահովում է Վարչության մասնակցությունը մարզային ենթակայության բժշկական հաստատությունների եկամուտների և ծախսերի նախահաշիվների, հաստիքացուցակների հաստատման, նրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու աշխատանքներին՝ հիմք ընդունելով տվյալ տարվա բյուջեն.
4) ապահովում է պետական լիազոր մարմնին մարզային ենթակայության բժշկական հաստատությունների բյուջեների վերանայման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու գործընթացը.
5) ապահովում է մարզային ենթակայության բժշկական հաստատությունների կրեդիտորական և դեբիտորական պարտքերի և մարզային ենթակայության բժշկական հաստատությունների կողմից մատուցված վճարովի ծառայություններից եկամուտների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության ու ամփոփման աշխատանքների իրականացումը.

6) ապահովում է մարզային ենթակայության բժշկական հաստատությունների վարձակալական հիմունքով հատկացված տարածքների վերաբերյալ թույլտվությունների, եզրակացությունների տրամադրումը.
7) ապահովում է մարզային ենթակայության փակ բաժնետիրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների ամփոփման (եռամսյակային, կիսամյակային և տարեկան կտրվածքով) տեղեկատվության նախապատրաստման աշխատանքները.
8) ապահովում է մարզային ենթակայության փակ բաժնետիրական ընկերությունների կողմից ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ ներկայացրած հաշվետվությունների և առևտրային կազմակերպությունների տարեկան գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե տարեկան շահութաբաժինների վճարման չափի մասին տեղեկատվության պատրաստման և ներկայացման աշխատանքները.
9) ապահովում է համապատասխան մարմիններ մարզային ենթակայության բժշկական հաստատությունների ֆինանսատնտեսական մոնիթորինգի արդյունքների վերլուծություններ ներկայացնելու գործընթացը՝ անհրաժեշտության դեպքում ձեռնարկելով համապատասխան միջոցներ.
10) ապահովում է մարզային ենթակայության բժշկական հաստատությունների թափուր հաստիքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, ամփոփումը և ներկայացումը պետական լիազոր մարմնին.
11) աջակցում է «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից բնակավայրերի ջրամատակարարման աղբյուրների, բնակելի շենքերի, դպրոցների և այլ օբյեկտների սանիտարական վիճակի նկատմամբ վերահսկողության իրականացմանը.
12) համակարգում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի իրականացման աշխատանքների կազմակերպումը.
13) համակարգում է մարզում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական ծրագրի իրականացման աշխատանքների կազմակերպումը.
14) ապահովում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերին համապատասխան զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց բժշկական զննման, լաբորատոր-ախտորոշիչ և հիվանդանոցային հետազոտության ու բուժման կազմակերպման աշխատանքները.
15) վերահսկողություն է իրականացնում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակում հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների, նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման գործընթացի կազմակերպման նկատմամբ.

16) վերահսկողություն է իրականացնում արտահիվանդանոցային ծառայություններ մատուցող մարզային ենթակայության բժշկական հաստատությունների կողմից բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման գործընթացի նկատմամբ.
17) վերահսկողություն է իրականացնում հիվանդանոցային ծառայություններ մատուցող մարզային ենթակայության բժշկական հաստատությունների կողմից բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման գործընթացի նկատմամբ.
18) վերահսկողություն է իրականացնում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն ու սպասարկում ստանալու նպատակով ուղեգրերի տրամադրման գործընթացի նկատմամբ.
19) կազմակերպում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի (այսուհետ՝ Մարզ) առողջապահական առաջնային պահպանման համակարգում հավաքագրված բնակչության մարզային ավտոմատացված ռեգիստրի (բազայի) ստեղծման և թարմացման աշխատանքները.
20) կազմակերպում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունից անաշխատունակության թերթիկների, երեխայի առողջության անձնագրերի ստացման և մարզային ենթակայության բժշկական հաստատություններին տրամադրման աշխատանքները.
21) վերահսկում է մարզային ենթակայության բժշկական հաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների տեսակների և նրանց ծավալների համապատասխանությունն առողջապահության նախարարության չափորոշիչներին.
22) ապահովում է պետական լիազոր մարմնի կողմից կենտրոնացված կարգով, ինչպես նաև մարդասիրական օգնության ճանապարհով ձեռք բերված և Մարզին հատկացված դեղերի ստացումը և բաշխումը մարզի բժշկական հաստատություններին.
23) ապահովում է պետական լիազոր մարմնի կողմից կենտրոնացված կարգով ձեռք բերված դեղերի մարզային ենթակայության բժշկական հաստատություններում առկա մնացորդների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը՝ անհրաժեշտության դեպքում ներմարզային վերաբաշխումներ կատարելու նպատակով.
24) ապահովում է պետական լիազոր մարմնի կողմից կենտրոնացված կարգով, ինչպես նաև մարդասիրական օգնության ճանապարհով ձեռք բերված և Մարզին հատկացված դեղերի շարժի, եռամսյակի վերջում մնացորդի, հաշվառված հիվանդների թվի, հիվանդների անվանացանկի և դեղորայքի ներմարզային բաշխման վերաբերյալ ամփոփ տեղեկատվության ներկայացումը պետական լիազոր մարմնին.
25) ապահովում է մարզային ենթակայության բժշկական հաստատություններում իմունականխարգելման գործընթացի ցուցանիշների վերլուծության իրականացումը.
26) վերահսկում է Մարզում կորոնավիրուսային հիվանդության դեմ իրականացվող պատվաստումների գործընթացը, աջակցում գործընթացի ակտիվացմանը.
27) վերահսկում է Մարզում մարդու պապիլոմավիրուսային վարակի դեմ իրականացվող պատվաստումների գործընթացը, աջակցում գործընթացի ակտիվացմանը՝ պարբերաբար կազմակերպելով հանդիպումներ բշկական անձնակազմի հետ.

28) աջակցում է իմունականխարգելման գործընթացում ընդգրկված մարզային ենթակայության բժշկական հաստատությունների համապատասխան անձնակազմի համար կազմակերպվող դասընթացների, սեմինարների կազմակերպմանն ու իրականացմանը.
29) աջակցում է ավագ և միջին բուժանձնակազմի շարունակական մասնագիտական զարգացման, վերամասնագիտացման, ինչպես նաև հավաստագրման գործընթացի իրականացմանը.
30) աջակցում է Մարզի տարածքում սոցիալական աջակցության պետական և այլ ծրագրերի իրականացման աշխատանքները.
31) աջակցում է սոցիալական հարցերով, հաշմանդամների և տարեցների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների գործունեությանը և ապահովում Աշխատակազմի հետ համագործակցությունը.
32) ապահովում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանության ընթացքում ծագած խնդիրների վերաբերյալ համապատասխան պետական կառավարման մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին և հասարակական կազմակերպություններին առաջարկություններ ներկայացնելու գործընթացը.
33) աջակցում է պրոթեզաօրթոպեդիկ, վերականգնողական պարագաների տրամադրման աշխատանքների իրականացմանը.
34) աջակցում է Մարզում բնակչության զբաղվածության պետական ծրագրերի իրականացման աշխատանքներին.
35) ապահովում է Վարչության մասնակցությունը Մարզում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների (անձանց) սոցիալական գնահատման (սոցիալական կարիքների գնահատում) և սոցիալական աջակցության աշխատանքներին, ինչպես նաև գնահատված սոցիալական կարիքների վրա հիմնված սոցիալական աջակցության հասցեական ծրագրերի իրականացմանը.
36) համագործակցում է Մարզում գործող Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների (այսուհետ՝ ՄՍԾՏԿ) հետ, մասնակցություն ունենում ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման և սոցիալական դեպքի վարման աշխատանքներին.
37) աջակցում է տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված համակարգող խորհուրդների աշխատանքներին.
38) ապահովում է Վարչության մասնակցությունը Մարզի առողջապահության և սոցիալական ոլորտի տարածքային զարգացման ռազմավարության մշակման աշխատանքներին.
39) ապահովում է ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականության իրականացման գործընթացներ.
40) ապահովում է միջոցառումների ցանկով նախատեսված աշխատանքների իրականացումը, գենդերային քաղաքականության պետական ռազմավարությունը տեղայնացնում է Մարզում.

41) ապահովում է տարեկան հաշվետվությունների ներկայացումը Մարզում գենդերային քաղաքականության իրականացման մասին և տալիս առաջարկություններ՝ ոլորտում իրավիճակի բարելավման վերաբերյալ,

42) ապահովում է Վարչության մասնակցությունը Մարզում կանանց և երեխաների առուվաճառքի (թրաֆիքինգ) հիմնահարցերի ուսումնասիրությանը, վերլուծությանը, զոհերի սոցիալական վերականգմանն ուղղված առաջարկությունների ներկայացմանը.

43) Մարզում հայտնաբերված կանանց և երեխաների առուվաճառքի (թրաֆիքինգ) զոհերի վերաբերյալ ապահովում է տեղեկատվության տրամադրման աշխատանքները.

44) ապահովում է իրավասու մարմինների հետ համատեղ աշխատանքների իրականացումը՝ իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող, հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների (կամ նրանց օրինական ներկայացուցիչների) հետ.

45) իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների (նրանց ընտանիքների) կենսապայմանների և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություն, ապահովում է երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացումը.

46) ապահովում է Վարչության մասնակցությունը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի անհատական սոցիալական ծրագրի մշակմանը, դրանով նախատեսված միջոցառումների իրականացմանը, կազմակերպում է խմբային (բազմամասնագիտական) քննարկումներ.

47) ապահովում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների «Մանուկ» տեղեկատվական ենթահամակարգի վարման աշխատանքները.

48) ձեռնարկում է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության անհրաժեշտ միջոցներ, երեխայի կյանքին և առողջությանը սպառնալու, նրա իրավունքների և շահերի խախտումների ահազանգերի դեպքերում.

49) խորհրդատվություն է տրամադրում ծնողական իրավունքի իրականացման ընթացքում ծնողների կողմից փոխադարձ համաձայնության բացակայության դեպքերում՝ հաշվի առնելով երեխայի շահերը.

50) մասնակցում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների այն նիստերին, որտեղ քննարկվում են երեխայի հետ կապված հատուկ դեպքերը.

51) ապահովում է Վարչության մասնակցությունը դատական այն նիստերին, որտեղ քննարկվում են երեխայի իրավունքներն ու շահերը.

52) երեխայի կյանքը կամ առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքերում, խնամակալության և հոգաբարձության մարմնին ցուցաբերում է անհրաժեշտ աջակցություն՝ երեխային ծնողներից (նրանցից մեկից) կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան, վերցնելու և երեխայի ժամանակավոր տեղավորումն անհապաղ ապահովելու հարցում.

53) իրականացնում է հանրակրթությունից դուրս մնացած, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական իրավունքի

պաշտպանությունը՝ նրանց ներգրավելով հանրակրթական ուսումնական հաստատություններում.

54) իրավասու մարմինների հետ համատեղ քննարկում է մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների կողմնորոշման խնդիրները, անհրաժեշտության դեպքում իրականացնում է ուղղորդումներ, պաշտպանում է անչափահասների իրավունքներն ու շահերը.

55) իրականացնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կենսապայմանների և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություն, կատարում է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից ներկայացված փաստաթղթերի և առանց ծնողական խնամքի մնացած երեխայի հետագա խնամքը տրամադրելու (բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն, կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունելու, կամ խնամատար ընտանիքում տեղավորելու, կամ կենսաբանական ընտանիք վերադարձնելու, կամ որդեգրման հանձնելու, կամ խնամակալ, կամ հոգաբարձու նշանակելու նպատակահարմարության) վերաբերյալ ՄՍԾՏԿ տրամադրած նախնական եզրակացության լրիվ, օբեկտիվ և համակողմանի ուսումնասիրություն և ստացված փաստաթղթերի ու տեղեկատվության համադրման, վերլուծության արդյունքում կազմում եզրակացություն՝ երեխայի հետագա խնամքը տրամադրելու (բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն, կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունելու, կամ խնամատար ընտանիքում տեղավորելու, կամ կենսաբանական ընտանիք վերադարձնելու, կամ որդեգրման հանձնելու, կամ խնամակալ, կամ հոգաբարձու նշանակելու նպատակահարմարության) մասին.

56) ապահովում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց հաշվառման, տվյալների գրանցման, անձնական քարտի և փաստաթղթերի պատճենների ներկայացման աշխատանքների իրականացումը.

57) ապահովում է որդեգրման ենթակա երեխաների հաշվառման, տվյալների գրանցման, անձնական քարտի և փաստաթղթերի պատճենների ներկայացման աշխատանքների իրականացումը.

58) ապահովում է որդեգրել ցանկացող Մարզում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացուց ստացված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի և ՄՍԾՏԿ-ի կողմից տրված՝ որդեգրել ցանկացող անձ հաշվառելու վերաբերյալ նախնական եզրակացության հիման վրա, որդեգրել ցանկացող անձին որդեգրելու հնարավորություն տալու մասին դրական կամ բացասական եզրակացության տրամադրման, դրական եզրակացության հիման վրա տվյալների գրանցման, որդեգրողի թեկնածուի անձնական քարտի լրացման և փաստաթղթերի պատճենները պետական լիազոր մարմնին փոխանցման աշխատանքների իրականացումը.

59) ապահովում է խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած անձից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ բոլոր

փաստաթղթերը ստանալուց հետո և ՄՍԾՏԿ-ի կողմից տրված՝ խնամատար ծնող հաշվառելու վերաբերյալ եզրակացության հիման վրա, խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած անձի հաշվառումը կամ գրավոր կերպով դիմումի մերժումը: Կազմակերպում է երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում, իրականացնում է ընտանիքում հոգեզավակի կյանքի, առողջության, դաստիարակության և կենսապայմանների վերահսկողություն.

60) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելու մասին երեխայի ծնողների (ծնողի) կամ ընտանիքի չափահաս այլ անդամի գրավոր դիմումի դեպքում, կատարած ուսումնասիրության արդյունքում տալիս է համապատասխան եզրակացություն (դրական կամ բացասական)՝ դրա մեկական օրինակներն ուղարկելով նաև պետական լիազոր մարմնին և տվյալ ընտանիքի բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին.

61) ապահովում է ծնողական իրավունքներից զրկելու կամ սահմանափակելու վերաբերյալ դիմումները դատարան ներկայացնելու աշխատանքները.

62) աջակցում է երեխաների ծննդյան վկայականների ձեռք բերմանը՝ դրանց բացակայության դեպքում.

63) Մարզպետին է ներկայացնում ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի գործունեության մասին տարեկան հաշվետվությունը.

64) երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովին է ներկայացնում տարեկան հաշվետվություն երեխայի իրավունքների պաշտպանության գործունեության մասին.

65) ապահովում է Մարզպետին հասցեագրված, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմիններին հասցեագրված և Աշխատակազմ վերահասցեագրված գրությունների, դիմումների, բողոքների, առաջարկությունների քննարկման և ուսումնասիրման աշխատանքները.

66) ապահովում է Վարչության խնդիրներից բխող այլ իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, փաստաթղթերի նախապատրաստման, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակման աշխատանքների իրականացումը.

67) ապահովում է Վարչության մասնակցությունը այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև Աշխատակազմի ստորաբաժանումների հետ կազմակերպված՝ առաջադրված խնդիրների լուծման շուրջ աշխատանքային և մասնագիտական քննարկումներին.

68) Աշխատակազմի գլխավոր քարտուղարին է ներկայացնում Վարչության աշխատանքային ծրագիրը.

69) Աշխատակազմի գլխավոր քարտուղարին, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է առաջարկություններ՝ Վարչության աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար.

70) Վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված, ինչպես նաև Աշխատակազմի գլխավոր քարտուղարի գիտությամբ, կարող է հրավիրել խորհրդակցություններ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների.

71) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Մարզպետի որոշումներով, Աշխատակազմի գլխավոր քարտուղարի հրամաններով վերապահված այլ գործառույթներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

7.Վարչությունն իր գործունեությունն իրականացնում է Աշխատակազմի հաստիքացուցակով նախատեսված կազմով:

8.Վարչության գործունեությունը համակարգում է Մարզպետը, իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ հսկողություն է իրականացնում Աշխատակազմի գլխավոր քարտուղարը:

9.Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Վարչության պետը:

10.Վարչության պետը և աշխատակիցները քաղաքացիական ծառայողներ են:

11.Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, գործունեության ազդեցության, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է